



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 20 ՅՈՒՆԻՎՈՐ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 94

ԱՍՏՈՒԱԾ ԲՈԼՈՐԻՆ ԴԱՏԱԻՈՐՐ

Մինչեւ ե՞րբ, Տէր, մինչեւ ե՞րբ ամբարիշտները պիտի յոխորտան,
չարագործները գոռոպ խօսքերով պիտի արտայայտուին,
եւ իրենց չարիքներով պիտի հպարտանան:

Քու ժողովուրդդ կը ճգմեն,

կը չարչարեն քեզի պատկանողները,

այրիներն ու պանդուխտները կը սպաննեն,

եւ որբերը կը կոտորեն, ըսելով.

«Տէրը չի տեսներ, մեր հայրերուն Աստուածը

այս բաներուն ուշադրութիւն չի դարձներ»:

Յիմար մարդիկ, հասկցէք, դուք՝ անմիտներ, ե՞րբ պիտի սորվիք:

Ան՝ որ ականջը սրեղծեց՝ ինք չի՞ լսեր,

ան՝ որ աչքը գոյացուց՝ ինք չի՞ տեսներ:

Ան՝ որ ազգերը կը սաստի, եւ իր գիտութեան մէջ կը դաստիարակէ՝

նաեւ վանոնք պիտի չդատարարէ՞:

Տէրը գիտէ ինչ որ մարդիկ կը խորհին,

եւ անոնց խորհուրդներուն ոչնչութիւն ըլլալը:

Տէրը անիրաւներուն պիտի հատուցանէ՝

իրենց անիրաւութեան համաձայն.

իրենց իսկ գործած չարութեամբ վանոնք պիտի բնաջնջէ:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

21 ԳԼՈՒԽ

ԵՐՈՒՄԱԳԼԵՄԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿՐ ԳՈՒՇԱԿՈՒԻ (21:1-10)

Հիմա եկած է պահը, որ Երեմիա մարգարեն խնդրեն, որպեսզի Տիրոջ հարցնե կամ Անկե խնդրե որպեսզի Նաբուգոդոնոսոր թագաւորը ջարձակի: Ասկէ առաջ տեսանք, սակայն, որ Աստուած խստի կ'արգիլէր մարգարէին որ ջարտիսօտ այս ժողովուրդին համար, որովհետեւ պիտի կոտորուի եւ թշնամիին ձեռքը մատնուի: Ընդհակառակը, ոչ թէ պիտի ազարէ, այլ նոյնինքն Աստուած Ինք իրենց հետ պիտի պատերազմի: Այո, կրնայ ոճը խիստ թուիլ, բայց միւս կողմէ նաեւ Աստուծոյ արդարադար ըլլալը ցոյց կու տայ, որովհետեւ այս բոլորը ուրիշ բան չեն եթէ ոչ իրենց ապրած կեանքի ու կենցաղի պարտը: Քանի անգամներ Տէրը զգուշացուցած, թելադրած էր, Իր մարգարէները դրկած էր, որպէսզի սխալ, մոլար ու սուր ճամբաներէն վերադառնային, բայց անոնք մնացին անդրդուելի: Յաճախ երբ նեղութեան ու դժուարութեան մէջ կ'ըլլանք այն ատեն կը սկսինք փնտրելու մարդիկը որպէսզի մեզի համար բարեխօսեն կամ աղօթեն պարզապէս ազատելու համար պարիժէն, բայց առանց անդրադառնալու որ այդ բոլորը առիթներ են խոնարհումի, զղջումի, խոստովանութեան ու վերադարձ առ Աստուած: Ահա նոյն վիճակին մատնուած էր Յուդայի թագաւորը, որ այս անգամ ոչ միայն Քաղղէացիները պիտի յարձակին, այլ նաեւ Աստուած Ինք պիտի պատերազմի անոնց դէմ. **«երկնցած ձեռքով ու զօրաւոր բազուկով, սրամտութեամբ, բարկութեամբ, ու մեծ ցասումով ձեզի հետ պիտի պատերազմիմ»** (5 հմբ): Այս բոլորը որպէս արտայայտութիւն չարին ու չարիքին դէմ, որուն մասնակից է Աստուծոյ ժողովուրդը: Երբ պահը հասած է Աստուծոյ անմիջական միջամտութեան, արդէն կը նշանակէ ժամանակներու աւարտն է, ալ Աստուծոյ համբերութեան բաժակը լեցուած, ողորմութեան ժամանակն ալ աւարտած է: Այն նոյն ձեռքերը, որ ժամանակին երկնցուց որպէսզի զիրենք ազատէր Եգիպտոսի ստրկութենէն: Այն նոյն ձեռքերը որ երկնցուց հարուածելու համար Եգիպտոսի բանակը: Այն նոյն ձեռքերը որոնք հրաշալիք գործեցին, եւ այդ բոլորին սկանապես եղաւ այս նոյն ժողովուրդը: Ուրեմն, իրենք ծանօթ էին այդ ձեռքերուն:

Տէրը մարգարէին կ'ըսէ. **«Այս ժողովուրդին ըսէ՛ Ահա ես ձեր առջեւ կը դնեմ կեանքի ճամբան ու մահուան ճամբան»** (8 հմբ): Ասկէ առաջ ալ Տէրը նոյն արտայայտութիւնը ունեցաւ երբ այս ժողովուրդը դուրս բերաւ Եգիպտոսէն, ու անոնց զգուշացնելով ըսաւ. **«կեանքն ու մահը, օրհնութիւնն ու անէծքը ձեր առջեւ դրի: Ուրեմն կեանքը ընտրէք որպէսզի ապրիք»** (Բ Օրինաց 30:19): Այսպէղ արտայայտութիւնը բոլորովին փարբեր է Երեմիայի փրումը արտայայտութենէն: Բ օրինաց զիրքին մէջ ըսուածը Աստուծոյ պատուիրանին հնազանդութիւնն է, որպէսզի անով կեանքը ունենան, իսկ Երեմիային ըսուածը չարիքին նուազագոյնը: Այսինքն՝ իրենց առջեւ ունին երկու ընտրութիւն. եթէ քաղաքին մէջ մնացին սուրով, սովով, ու ժանտախտով պիտի մեռնին, իսկ եթէ դուրս ելլեն գերի պիտի փարուին Բաբելոն: Ապրելու հնարաւորութիւն, չարիքին նուազագոյնը:

ՅՈՒՂԱՅԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ (21:11-14)

Տէրը անգամ մը եւս կ'արտայայտուի ըսելով. **«Առջուն իրաւունքով դարաստան տեսէք ու զրկուածը հարստահարողին ձեռքէն ազատեցէք, ջրլայ որ ձեր չար գործերուն համար իմ բարկութիւնս կրակի պէս ելլելով բռնկի ու մառող մը ջրլայ»** (11-12 հմբ): Այս ժողովուրդին կոչումն էր նմանելու Աստուծոյ: Սուրբ եղէք, որովհետեւ ձեզ կանչողը՝ Աստուած Ինք սուրբ է: Արդար կեանք ապրեցէք, որովհետեւ ձեզ կանչողը Աստուած Ինք արդար է: Իրաւունք պաշտպանեցէք, որովհետեւ ձեզ կանչողը Աստուած Ինք զրկուածին իրաւունքը պաշտպանողն է: Հերաքրքրական արտայայտութիւն է երբ կ'ըսէ. **«Առջուն իրաւունքով դարաստան տեսէք»**, որ կը նշանակէ մի ուշացնէք, մի ձգձգէք: Ոչ թէ միայն արդարութեան եւ իրաւունքով զրկուածին դատը չէին տեսներ, առաւել եւս կը յիտրփային ըսելով. **«Մեզի դէմ ո՛վ պիտի ելլէ, կամ մեր փուններուն մէջ ո՛վ պիտի մտնէ»** (13 հմբ): Ահա Տէրը կ'ըսէ. **«Ես ձեզի դէմ եմ»** (13 հմբ): Պօղոս Առաքեալ կ'ըսէ. **«Եթէ Աստուած մեզի հետ է, ո՛վ կրնայ մեզի հակառակ, մեզի դէմ ըլլալ»**, իսկ եթէ Աստուած մեզի հետ չէ, մեզի դէմ է: **«Ձեր գործերուն պարտին համեմատ պիտի պարտեմ, ու կրակը պիտի ուրբ ձեր փունները»** (14 հմբ): Ուրեմն, եղածը ուրիշ բան չէ եթէ ոչ անոնց անօրէնութեան արդիւնքը, հետեւանքը, այլ խօսքով՝ Աստուծոյ արդար դարաստանը: